30-ՐԴ ՆԻՍՏ

25 և 26 հոկտեմբերի 1918թ.

Օրակարգի հարցերն են.

1. Կառավարության հայտարարությունը.
2. Օրինագիծ արդյունաբերական հիմնական և լրացուցիչ տուրքերի ավելացման մասին.
3. Օրինագիծ հողային և եկամտային տուրքերի ավելացման մասին.
4. Կառավարության պատասխանը հարցապնդումներին.
5. Ղարաքիլիսե պառլամենտական կոմիսիա ուղարկելու հարցը.
6. Բաքվի հայ կարոտյալներին 200.000 ռ. նպաստ բաց թողնելու հարցը.
7. Միջնակարգ դպրոցների աշակերտներին զորամասերից ազատելու օրինագիծը.
8. Ընթացիկ հարցեր:

Նախագահի առաջարկությամբ ոտքի կանգնելով հարգվում է Բաքվի զոհերի հիշատակը, որից հետո Մինիստր-նախագահը հետևյալ հայտարարությունն է անում:- Բեռլինի մեր ներկայացուցիչ բժ. Հ. Օհանջանյանից ստացանք մի հեռագիր, որ տրված է Կիևի և Թիֆլիսի վրայով, ու որով նա հայտնում է, թե Տաճկաստանը ընդունել է Բրեստի դաշնագիրը ու համաձայնել է յուր զորքերը հետ քաշել մինչև Բրեստի դաշնագրի սահմանները: Ջամալյանը ևս յուր կողմից հաղորդեց, որ անձնական խոսակցության ժամանակ Աբդուլ-Քերիմ փաշան ևս այդ մասին հայտնել է: Ուստի մեր կառավարությունը պաշտոնապես դիմեց թուրքաց դիվանագիտական ներկայացուցիչ Ալի-Մահմեդ փաշային՝ հարցնելով նրան, թե նա այդ մասին ստացե՞լ է, արդյոք, պաշտոնական հաղորդագրություն և եթե այո, զորքերի հեռացումը ի՞նչ ձևով պիտի կատարվի. վերջինիցս ցարդ պաշտոնական պատասխան չենք ստացել, բայց տեսակցության ժամանակ նա հայտնեց, որ այդ մասին դիմել է յուր կառավարության՝ նրանից հրահանգներ ստանալու համար:

Երկար աշխատանքներից հետո, երբ վերջապես հաջողվեց միացնել Երևանն ու Ալեքսանդրապոլը ուղիղ հեռագրագծով, կառավարությունն այսօր Ալեք-պոլի և Բաթումի վրայով հեռագրեց Պոլիս՝ Հայկական պատվիրակության, թե Բրեստի դաշնագրի ընդունման մասին պաշտոնական հաղորդագրություն չունենք, և ընդգծելով փախստականների դրությունը, առաջարկում է հեռագրել այդ մասին մանրամասնորեն:

Հայ-վրացական կոնֆլիկտի մասին Մինիստր-նախագահը հայտնում է, որ խորհրդի ընդունած որոշումը ու կառավարության տեսակետը՝ հարցը խաղաղ ճանապարհով վերջացնելու մասին, հեռագրված է արդեն Ջամալյանին: Բացի այդ, որովհետև Ժորդանիայից մինչև այժմ պատասխան չենք ստացել, ուստի և ուղարկված է Թիֆլիս հատուկ սուրհանդակ: Նրա հետ Թիֆլիս է ուղարկված կոնֆլիկտի հետ կապ ունեցող բոլոր հեռագրերի, արված որոշումների պատճենները: Հաղորդված է նաև վրաց կառավարությանը, որ մեր կառավարությունն այն տեսակետն ունի, որ թուրքաց թողած հողամասերը և Բորչալվի գավառի հայաբնակ մասը մեզ են պատկանում, բայց զենքի ուժի չենք դիմի, այլ մեր իրավունքները կպաշտպանենք խաղաղ ճանապարհով: Ի վերջո, ստացանք վրաց զինվ[որ]ական] նախարար Գեորգաձեից, կառավարության գլուխ Ժորդանիան դժբախտաբար հիվանդ է, մի հեռագիր, որով հայտնում է, թե իրենք ցանկանում են հար-

ցը խաղաղ ճանապարհով լուծել, ուստի մեր կառավարությունը կարծում է, որ հնարավոր է նախաձեռնել հայ-վրացական մի կոնֆերանսի գումարման՝ սահմանները որոշելու համար:

Սակայն կառավարությունը բարվոք համարեց այդ հարցի մասին զեկուցանել խորհրդին ու լսել նրա հեղինակավոր հրահանգները:

Կառավարության առաջարկի քննությունը հետաձգվում է ընդմիջումից հետո:

Ապա անփոփոխ անցնում է օրինագիծ հողային և եկամտային տուրքերի ավելացման մասին*:

Ներքին գործ. մինիստրը պատասխանում է էսէռական ֆրակցիայի հարցապնդմանը Դիլիջանի զեմստվոյի մասին: *Հ. Մարգսյանը* առաջարկում է հարցապնդումը հանձնել օրենսդրական հանձնաժողովին: Ս.Հ. ֆրակցիան այդ առաջարկին համաձայնում է այն պայմանով, որ համագումարից առաջ եղած դրությունը վերականգնվի, այսինքն՝ մնա հին ուպրավան: Այդ առթիվ եղած շատ երկար ու տաք վիճաբանություններից հետո որոշվում է հարցապնդումը հանձնել օրենսդրական կոմիսիային և պահել համագումարից առաջ գոյություն ունեցող status gvo-ն, այսինքն՝ հին ուպրավան: Վերջին մասը անցնում է 17 ձայնով՝ 16-ի դեմ: Ապա նիստը փակվում է՝ որոշելով շարունակությունը կայացնել հետևյալ ցերեկը:

Նախագահում է *Ա. Սահակյանը:*

Նախագահ - Այսօրվա նիստը երեկվա նիստի շարունակությունն է կազմում և հրավիրված է գլխավորապես Հայ-վրացական կոնֆերանս ձեռնարկելու և Ղարաքիլիսայի շրջանը պառլամենտական քննիչ հանձնաժողով ուղարկելու համար: Սակայն առաջարկություն կա, որ այսօրվա նիստի օրակարգը մտցնել նաև միջնակարգ դպրոցի աշակերտներին զինվորական ծառայությունից ազատելու օրինագիծը և Բաքվի հայերին 200.000 ռ. նպաստ տալու օրինագիծը: Խորհուրդը համաձայնվու՞մ է այս հավելմանը:

Խորհուրդը համաձայնվում է այդ հավելմանը:

Արշամ Խոնդկարյան - Այսօրվա նիստի օրակարգի մեջ պիտի դնել նաև մեր ֆրակցիայի հարցապնդումը՝ մինիստրական խորհրդին ուղղած:

Հայկ Ազատյան - Որովհետև Սոցիալիստ-հեղափոխականների հարցապնդումը սերտ կերպով կապված է Ղարաքիլիսայի շրջանը պառլամենտական քննիչ հանձնաժողով ուղարկելու խնդրի հետ, այդ պատճառով և այդ հարցով պիտի զբաղվենք անհրաժեշտորեն: Առաջարկում եմ այսօրվա նիստի օրակարգի մեջ մտցնել նաև այդ հարցապնդումը:

Առաջարկությունն ընդունված է:

Միրական Տեր - Մարտիրոսյան - Առաջարկում եմ «Բաքվի հայերին 200.000ռ. նպաստ տալու օրինագիծը» օրակարգի առաջին տեղը դրվի:

Առաջարկությունն ընդունվում է:

Նախագահ - Այսպիսով այսօրվա օրակարգն է.

1. Օրինագիծ Բաքվի հայերին 200.000ռ. նպաստ տալու մասին.
2. Հայ-վրացական կոնֆերանսի խնդիրը.
3. Միջնակարգ դպրոցների աշակերտներին զինվորական ծառայությունից ազատելու օրինագիծը.
4. Ղարաքիլիսայի շրջանը պառլամենտական քննիչ հանձնաժողով ուղարկելու խնդիրը.
5. Սոցիալիստ-հեղափոխականների հարցապնդումը:

Անցնում ենք օրակարգի առաջին խնդրի քննության:

Պատգամավոր *Ս. Տեր-Մարտիրոսյան*, զեկուցեցե՛ք «Բաքվի հայերին 200.000ռ. նպաստ տալու օրինագծի» մասին:

Միր. Տեր-Մարտիրոսյան - Խորհրդի նախագահության միջոցով ֆինանսական և բյուջետական հանձնաժողովը ստացել է կառավարությունից հետևյալ գրությունն ու օրինագիծը.

---

* «Որովհետև օրինագծերը առանձին տպվում են «Կառ. լրաբեր»-ում, նրանց բովանդակության վրա կանգ չենք առնի»:- Ծանոթ. թերթին:

«Բաքվի պաշարումից և գրավումից հետո հայ ազգաբնակությունը գտնվում է տնտեսական ծանր կացության մեջ:

Կառավարությունը չկարողանալով անտարբեր մնալ սույն դրության հանդեպ, Մինիստր-նախագահի առաջարկությամբ արեց հետևյալ որոշումը.

«Բաքվի հայերին օգնելու համար հատկացնել 200.000 ռ. և այդ մասին ներկայացնել խորհրդին հետևյալ օրինագիծը, հայտնելով շտապողականությունը:

Օրինագիծ

Բաքվի հայ ազգաբնակությանն օգնելու համար դնել կառավարության տրամադրության տակ պետական գանձարանից 200.000 ռ.»:

Ֆինանսական և բյուջետական հանձնաժողովը քննելով սույն օրինագիծը, միաձայն գտավ, որ սույն գումարը (200.000 ռ.) անհրաժեշտ է շուտափույթ հատկացնել՝ դնելով այն կառավարության տրամադրության տակ և խնդրում է խորհրդին՝ շտապողական ձևով ընդունել օրինագիծը:

Նախագահ - Նախագահության կողմից առաջարկում եմ խորհրդին հոտընկայս հարգել Բաքվում ընկած հերոսների և ազգաբնակչության հիշատակը*:

Խորհուրդը հոտընկայս հարգում է Բաքվում ընկածների հիշատակը:

Հակ. Տեր-Հակոբյան - Հայ. Հեղ. Դաշնակցության ֆրակցիան ընդառաջ է գնում այդ առաջարկին, սակայն նա գտնում է, որ նկատի ունենալով այն աղետը, որ կատարվել է Բաքվում և առաջարկած գումարի քչությունը, Հ. Հ. Դաշնակցության ֆրակցիան առաջարկում է այդ գումարը բարձրացնել և հասցնել կես միլիոնի:

Միր. Տեր-Մարտիրոսյան - Հայ Հեղ. Դաշնակցության ֆրակցիայի այդ առաջարկին ֆինանսական հանձնաժողովը դեմ չէ և յուր կողմից հայտնում է, որ խորհուրդն ընդունի վերոհիշյալ առաջարկը:

Տիգ. Մուշեղյան - Բաքվի աղետը մեծ աղետ է. դժբախտաբար այդ հարցին մենք երկար ժամանակ չտվեցինք և կանգ չառանք նրա վրա: Թերթերից մենք իմանում ենք Բաքվի աղետի մանրամասնությունները, որով կոտորածների ընդհանուր թիվը 20.000-ի է հասնում**:

Այսօր, երբ մենք կանգնած ենք պատերազմի վերջին, երբ պիտի վերջ տրվեն կոտորածներին, այսօր կոտորվում է մի ազգաբնակություն հանուն ամբողջության: Մենք համարվում ենք ի շարս այն ժողովուրդների, որոնք այս պատերազմի ծանրության տակ անչափ վնասվել են, և մենք լռելյայն չենք կարող անցնել այս դեպքի վրայից և պիտի այստեղից ասենք, որ հայ ժողովրդի և հայ դեմոկրատիայի վերաբերմամբ կատարվել է ամենամեծ ոճրագործությունը:

Բաքուն անդրկովկասյան դեմոկրատիայի և հատկապես հայ դեմոկրատիայի համար այն հանգրվանն է եղել, որտեղից ազատություն և լույս պիտի ստանար: Նա եղել է լուսո այն փարոսը, որը պիտի անդրկովկասյան դեմոկրատիային դուրս բերեր իր ներկա խավար և ընկճված դրությունից: Հայաստանի խորհուրդը չի կարող լռելյայն անցնել այդ փաստի վրայով և բավականանա 200.000 կամ կես միլիոն ռուբլի նպաստ հատկացնելով. այդ չի փրկելու հայ և ընդհանրապես անդրկովկասյան դեմոկրատիային:

Ամենամեծ ոճրագործությունն է կատարվածի հանդեպ անդրկովկասյան դեմոկրատիայի, ջախջախելով կովկասյան հեղափոխական կենտրոնն ու խավարեցնելով ազատության աղբյուրը: Դրա համար և Սոցիալիստ-հեղափոխականների ֆրակցիան Ձեր գլխի վրայով հայ ժողովրդին դիմելով՝ ասում է. արևելյան

---

* Խոսքը վերաբերում է Բաքվի պաշտպաններին և 1918 թ. սեպտեմբերի կեսերին թուրքական զորքերի կողմից քաղաքը գրավելուց հետո նրանց և տեղի թաթար մարդասպանների կողմից կազմակերպված կոտորածին, որին զոհ գնացին տասնյակ հազարավոր հայեր:-Ծանոթ. կազմ.:

** Պաշտոնապես հրապարակված այլ աղբյուրներում այդ թիվը ցույց է տրվում 30.000:- Ծանոթ. կազմ.:

հիվանդ մարդը* իր վերջին մաղձը թափում է հայ դեմոկրատիայի վրա, որովհետև այն լույսը, որ պիտի գար և փրկեր հայ դեմոկրատիային, խավարեցվում է հիվանդ մարդու ձեռքով: Մենք միանում ենք այդ առաջարկությանը՝ 200.000 ռ. կես միլիոն ռ. դարձնելու, սակայն չենք բավականանում դրանով: Մենք պիտի մեր բողոքը բարձրացնենք այդ բոլոր ոճրագործությունները նյութողի դեմ և պիտի ասենք այն, ինչ որ պիտի ասենք անկեղծ: Այն զայրույթի ճիչը, որ պիտի բարձրացնենք այդ բողոքի հետ միասին, այդ հայ ժողովրդի կրծքում տարիներով կուտակված մաղձն ու հառաչանքն է:

Մինիստր-նախագահ - Ես պարտք եմ համարում հայտնելու, որ Բաքվի աղետն այն ահռելիությամբ չի եղել, ինչ որ ասված է թերթի մեջ: Վերջին տեղեկությունները ցույց են տալիս, որ կոտորածի թիվը 5.000-ից ավել չէ: Այս հայտարարությունը չեմ անում, որպեսզի ազդած լինեմ խորհրդի տրամադրության վրա, այլ ստուգել փաստը իմ ստացած տեղեկության հիման վրա:

Հայկ Ազատյան-մինիստր - նախագահն ասում է, որ զոհերի թիվը 5.000-ից չի անցնում. բայց դրանով մենք չենք հանգստանում: Այդ փաստը նշանակում է, որ տասնյակ հազարավոր վիրավորներ կան և 100.000-վոր ազգաբնակություն փախել է Ռուսաստան ամիսներ շարունակ և քայքայվել է այնտեղ արդյունաբերությունը, որն այլևս այնքան հեշտությամբ չի վերականգնվի: Քայքայվել է նաև հաղորդակցությունը, որի հետևանքով անդրկովկասյան ժողովուրդներն երկար ժամանակ զուրկ պիտի մնան այն բարիքներից, որ անհրաժեշտ էին նրան:

Մենք այժմ պիտի ընդգծենք այն քաղաքականությունը, որ անհրաժեշտ է մեզ համար և պիտի պարզ ասենք այն, ինչ անելու ենք: Եթե մենք ռեալ աչքերով նայենք, կտեսնենք, որ Բաքվի կործանումը նրանից է առաջ եկել, որ չի եղել անդրկովկասյան ընդհանուր միություն: Բաքուն այն օղակն է, որ պիտի առաջ բերեր Անդրկովկասի միությունը և երբ նա այսօր ընկնում է, դրա հետ կորչում է նաև մեր հույսը: Այսօր ընկավ Բաքուն, վաղը նույն վիճակին կարժանանա նաև Թիֆլիսը, եթե շարունակենք վարել այն քաղաքականությունը, որ մինչև այժմ վարել ենք: Երբեք չպիտի համոզվենք այն բանում, թե ամեն ինչ վերջանալու վրա է, որովհետև չգիտենք, թե նույն զորքը վաղը հաջողակ դեպքում, զենքը չի ուղղի մեր դեմ: Այս բոլորն ի նկատի ունենալով, պիտի փոխենք մեր քաղաքականությունը. այլևս մենք չենք կարող կույր ձևանալ այն բոլորի դիմաց, ինչ որ եղել է: Բրեստի** դաշնագիրն արդեն ընդունվել է, բայց թուրքերը դեռ շարունակում են մնալ մեր տերիտորիայի վրա և մեր կառավարությունն այդ բանի դեմ չի առնում ամեն հարկավոր միջոցները: Մեր կառավարությունը, որ այնքան ակտիվ է դեպի վրաց կառավարությունը, երբեք այդպես ակտիվ չի եղել տաճկական կառավարության Երևանի փաշայի նկատմամբ: Պիտի բողոքենք Բաքվի եղեռնագործության դեմ և եթե մեր կառավարությունը շարունակի լռելյայն քաղաքականությունը, այս դրությունն ավելի կերկարացնենք: Չպիտի լինի մեր քաղաքականության մեջ այլևս այն լուռ հանդիսատեսությունը, ինչ մինչև այժմ եղել է Անդրկովկասի այս կամ այն մասի կործանումի վերաբերմամբ:

Ի վերջո պատգամավորը հայտնում է, որ իրենք միանում են Սոցիալիստ-հեղափոխականների առաջարկին, տալով գումարը և միաժամանակ հայտնելով մեր բողոքը, որովհետև քանի շուտ է, պիտի առաջն առնել այդ ոճրագործությունների և փրկել այն մասերը, որոնք չեն ենթարկվել դեռ դրան, ինչպես Ղարաբաղն է և ուրիշները:

Սահակ Թորոսյան - Այստեղ խնդիրն երկու կողմ ունի. նախ՝ այն, ինչ որ կատարված է փաստորեն, երկրորդ՝ այն, որ ցույց է տվել Թուրքիան դեպի հայերը: Հայտնի է մեզ բոլորիս, որ շնորհիվ մեր զորքի նահանջի, տեղի ունեցավ

* Ակնարկը վերաբերում է Թուրքիային:-Ծանոթ. կազմ.:

** Բրեստի դաշնագիրը կնքվել է Բրեստ-Լիտովսկում, 1918թ. մարտի 3-ին: Մի կողմից Ռուսաստանը և մյուս կողմից՝ Գերմանիան, Ավստրո-Հունգարիան, Բուլղարիան ու Թուրքիան,: (Տե՛ս) «Հայաստանը միջազգային դիվանագիտության և խորհրդային արտաքին քաղաքականության փաստաթղթերում», Երևան, 1972, էջ 424-430:-Ծանոթ. կազմ.:

Բաքվի հաշտությունը և որտեղ մենք կատարյալ հաղթող հանդիսացանք: Այժմ հարց է առաջ գալիս, արդյո՞ք այժմ քաղաքական հանգամանքները փոխվել են և մենք կարո՞ղ ենք բուռն կերպով բողոքել տաճիկ կառավարության դեմ, իմ կարծիքով այո, փոխվել են: Բաքվի վրա մենք նայել ենք որպես մեր հեղափոխության վերջին ապաստարանի վրա: Այն ժամանակ, երբ Բաքվի բանվորներն իրենց վերջին ճիգերն էին թափում, մենք բոլորս էլ սրտատրոփ սպասում էինք, որ Բաքուն ջախջախի տաճիկ բանակը: Ոչ մի մարդ չի կարող ասել, որ տաճկական կառավարությունը լուռ է. մենք բոլորս էլ գիտենք, որ նրա ցանկությունն է հայ ազգի բնաջնջումը: Եվ երբ մենք ժողովրդի բոլոր խավերին ի զեն ենք հրավիրում կռվելու Տաճկաստանի դեմ, այն ժամանակ կարծեմ մյուս կուսակցությունները հակառակ էին դրան: Այժմ մենք ևս բուռն կերպով բողոքում ենք Բաքվում կատարված տաճկական վայրագությունների դեմ և միաժամանակ գովում ենք Բաքվի դեմոկրատիային, որը մինչև վերջին քայլ հավատարիմ մնաց իր ծգտումներին և կռվեց Տաճկաստանի դեմ, գովում ենք նաև Ղարաբաղը, որ այժմ զենքը ձեռքում կռվում է տաճկական բռնապետության դեմ:

Արշավիր Մելիքյան - Հիշեցնել անցյալի դեպքերը, նպատակահարմար չէ, սխալը պարզ և շեշտված կերպով պիտի դրվի: Երբ բացվեց Հայաստանի Խորհուրդը, ես այն ժամանակ ասացի, որ այն լուծը, որ բռնությամբ դրված է մեր վզին, պիտի նույն կերպ էլ դեն շպրտվի: Մյուս ֆրակցիաները չարեցին այդ: Այն ժամանակ Մինիստր-նախագահն ասաց, որ Հայաստանի կառավարությունը թույլ չի տա արկածախնդրություններ անելու. այն քաղաքական նկատառումներով էր: Հայտնում եմ այժմ ուրախությունս այն բանի համար, որ լեզուները վերջապես բացվում են: Բաքվի կռիվների ժամանակ այդ կուսակցությունները միանգամայն այլ դիրք էին բռնել, չնայած Բաքուն այն օղակն էր, որ ի մի պիտի շաղկապեր Կովկասում բոլոր դեմոկրատիկ տարրերը: Եթե անալիզի ենթարկենք այս իրողությունը, կտեսնենք, որ այդ ոճրագործության մեջ հանցագործ է նաև մեր կառավարությունը: Մի՞թե Բաքվի ոճրագործության մեջ մեղսակցություն չի ցույց տալիս այն փաստը, որ թուրքական բանակները Հայաստանի տերիտորիայի վրայով՝ Դիլիջանով անցնում էին Բաքվի վրա և Հայաստանի կառավարությունը ոչինչ չէր անում դրա առաջն առնելու համար: Հանցագործ ենք այդ ոճրագործության մեջ և այդ պիտի խոստովանվել, պարոնա՛յք, մենք բոլորս:

Ստ. Մամիկոնյան - Ես միանում եմ այդ արտահայտություններին: Բաքվին ամենից առաջ հարկավոր է բարոյական օգնություն, դրա համար և մեր կառավարությունն ուղարկի պիտի Բաքու մի առանձին անձն՝ դրության հետ ավելի ի մոտո ծանոթանալու: Եթե Ադրբեջանի մեր ներկայացուցիչը արդեն գտնվում է Բաքվում, այդ կարելի է հանձնարարել նրան, իսկ եթե դեռ Բաքվում չէ, կառավարությունը պիտի աշխատի օր առաջ ուղարկել: Այժմյան գումարը, որ Հայաստանի Խորհուրդը հատկացնում է Բաքվին, չնչին է: Պիտի նախ ծանոթանալ դրությանը և ապա ըստ այդմ էլ յուր աջակցությունը ցույց տա:

Մինիստր-նախագահ - Հայաստանի դիվանագիտական ներկայացուցիչը Ադրբեջանում նշանակված է Տիգրան Բեգզադյանը: Թիֆլիսից նա մեկնել է Բաքու թե՝ չէ՞, չգիտեմ. երկու օր առաջ նա դեռ չէր մեկնել: Բաքվի հայ ազգաբնակության համար հատկացված նպաստը պիտի դրվի մեր ներկայացուցչի տրամադրության տակ:

Երվանդ Հարությունյան - Մենք մեր վերաբերմունքը ցույց պիտի տանք ոչ միայն կատարված իրողության նկատմամբ, այլև այն բոլորի, որ դեռ չեն կատարվել: Մենք մեր վերաբերմունքը ցույց պիտի տանք թուրքական կառավարության այն բանի համար, որ նա մինչև այժմ չի իրագործում Բրեստի դաշնագիրը:

Նախագահ - Վիճաբանություններն սպառված եմ համարում և քվեարկության եմ դնում Սոցիալիստ-հեղափոխականների ֆրակցիայի բանաձևը:

«Լսելով Մինիստրի առաջարկը Բաքվի աղետյալներին նպաստ տալու մասին, Հայաստանի Խորհուրդը ընդառաջ է գնում այդ առաջարկին և միաժամանակ իր սրբազան պարտքն է համարում բարձրացնելու իր բողոքի ձայնը՝ նշավակելու

այն գազանությունները, որ վայրենի հրոսակները թույլ են տվել իրենց՝ Բաքվի խաղաղ ազգաբնակչության վերաբերյալ»:

Բանաձևն անցնում է միաձայն:

Նախագահ - Քվեարկության է դրվում 200.000 ռ կես միլիոն դարձնելու առաջարկը:

Խորհուրդը ընդունում է այդ առաջարկը միաձայն:

Ֆինանսների մինիստր - Եթե օրինագծի խմբագրությունն էլ այսօր է լինելու, խնդրում եմ օրինագծին օրենքի ձև տալ և գրել այսպես.

«Բաքվի հայ ազգաբնակության համար բաց թողնել կրեդիտ Արտաքին գործոց մինիստրության՝ Պետական գանձարանից 500.000 ռուբլի»:

Հայկ Ազատյան - Հարմար եմ համարում օրինագծում հայ բառը ջնջել և թողնել միայն ազգաբնակություն բառը, սակայն որից, իհարկե, փաստորեն հայ ազգաբնակությունը կօգտվի: Հայաստանի ներկայացուցիչն, իհարկե, կմտածի հայերի մասին, բայց այդ որոշ նշանակություն կունենա: Առաջարկում եմ գրել «Բաքվի աղետյալներին»:

Առաջարկն ընդունվում է:

Նախագահ - Քննության է դրվում 2-րդ հարցը, այն է՝ Հայ-վրացական կոնֆերանսի խնդիրը: Խոսքը պատկանում է Մինիստր-նախագահին:

Մինիստր-Նախագահ - Երեկ մոռացա զեկուցելու մի հեռագրի մասին և ապա երեկոյան ստացվել է մի հեռագիր, որոնց մասին պիտի զեկուցեմ այժմ: Երեկ առավոտ զինվորական մինիստրն ինձ հետ խորհրդակցելուց հետո ուղարկել է Դիլիջանի մեր զորքերի հրամանատարին հետևյալ հեռագիրը*: Սրա պատասխանն ստացվեց երեկոյան: Որպեսզի հասկանալի լինի, որ մի երկու փոքր թյուրիմացություններ են եղել, որոնք կարող են սխալ հասկացվել վրաց կառավարության կողմից,- դա Կոբեր կիսակայարանի և Վարանցովկու գրավումն է մի քանի ժամով: Պիտի հայտնեմ այստեղ, որ մեր զորքերը գնացել էին այդտեղ տեսակցության և մտքերի փոխանակության համար: Այդտեղ հանկարծ շրջապատվում են գերմանական զորքով և զինաթափ են արվում, բայց հետո Թիֆլիսից իրենց հրամանատարից ստանում են հեռագիր և մեր զինվորներին հետ են դարձնում՝ հանձնելով նրանց զենքերը: Հրամայված է, որ մեր զորքերը նույնպես տեսակցության մտադրությամբ չգնան, որպեսզի վրաց կառավարությունը չկարծի, թե մենք ագրեսիվ քայլեր ենք անում: Երեկ գիշեր ստացել եմ վրաց կառավարության արտաքին գործոց մինիստրի պաշտոնակատար Ն. Ռամիշվիլուց հետևյալ հեռագիրը*:

Այսօր զինվորական մինիստրը, խորհրդակցելով ինձ հետ, մեր զորքերի հրամանատարին ուղարկել է հետևյալ հեռագիրը:

Ես արդեն պատրաստել եմ Ն. Ռամիշվիլու հեռագրի պատասխանը, բայց չեմ ուղարկել, որպեսզի իմանամ խորհրդի որոշումն այդ բանակցությունների վերաբերմամբ:

Ստ. Մամիկոնյան - Պիտի ողջունել, որ հայ-վրացական հարաբերությունները հարթվում են: Սակայն, այնուամենայնիվ, թե՛ վրաց կառավարության և թե՛ մեր կառավարության խփած հեռագիրների մեջ կան անզգույշ խոսքեր: Վրաց կառավարության հեռագրի մեջ կա «...»* խոսքերը, իսկ մեր կառավարության հեռագրում «Воина» բառը: Շատ ցանկալի կլինի, որ կոնֆլիկտը խաղաղ ճանապարհով հարթվող հարաբերությունների ժամանակ այդ խոսքերը չգործածվեն: Գալով կոնֆերանսին, պիտի ասեմ, որ կոնֆերանս կնշանակվի այն ժամանակ միայն, երբ բոլոր խնդիրները պարզված կլինեն: Մենք այժմ չենք կարող ասել այդ

---

* Հեռագրի տեքստը արձանագրությունում բացակայում է: Ծանոթ. կազմ.:

* Վրաց կառավարությունից ստացված հեռագրի և ուղարկված պատասխան հեռագրի տեքստերը արձանագրությունում բաց են թողնված: Ծանոթ. կազմ.:

** Արձանագրությունում խոսքերը բաց են թողնված: Ծանոթ. կազմ.:

* Արձանագրությունում խոսքերը բաց են թողնված: Ծանոթ. կազմ.:

առթիվ ոչինչ՝ մինչև վրաց կառավարությունից կստանանք նրա վճիռը: Այդ կոնֆերանսը պիտի զբաղվի սահմանագծումների խնդիրներով:

Սահմանագծումները արբիտրաժով լուծել չի կարելի, որովհետև Վրաստանը կանգնած է պատմական տեսակետի վրա, իսկ մենք՝ էթնիկական: Եթե Վրաստանին համոզենք, որ էթնիկականն է ճիշտը և մինչ այդ, քանի որ տեսնում ենք անհամաձայնություն կա այդ խնդրի շուրջը, այդ խնդիրը չպիտի հանձնել արբիտրաժին: Շուտով պիտի որոշել դեմարկացիոն գիծը, որովհետև միջոցում գտնվող գյուղերը մեր զորքերի կողմից գրավելը գուցե զինվորական հարմարություններ ունի: Դեմարկացիոն գծի խնդրի լուծումն ավելի կարևոր է ներկայումս, քան կոնֆերանսը: Առաջարկում եմ հանձնարարել կառավարությանը՝ դեմարկացիոն գծի խնդիրը լուծել տեղում և հեռագիր տա դրա մասին՝ այդ լուծելու տեղական զինվորական իշխանությունների կողմից:

Նախագահ - Խոսողներ չկա՞ն:

Հովհ. Բուդաղյան - Հայ Հեղափոխական Դաշնակցության ֆրակցիան կարծում է, որ հարցը հասունացած չէ և այսօր կոնֆերանսի մասին չի կարելի խոսել և չգիտենք՝ վրաց կառավարությունը վճռե՞լ է այդ բանը, թե ո՞չ: Ֆրակցիան առաջարկում է կառավարությանը՝ բանակցություններ վարել և աշխատել խաղաղ ճանապարհով հարթել այդ խնդիրը:

Մինիստր-նախագահ - Այս խնդրում թե՛ մենք և թե՛ Վրաստանն էլ մի կետի վրա ենք կանգնած, այն է՝ փոխադարձ համաձայնությամբ ու հաշտությամբ վերջացնել կոնֆլիկտը: Դրա համար և մենք պիտի գործնական քայլեր անենք, այն է՝ որ այսօր մի որոշում ունենանք և դրանով էլ առաջնորդվենք հետագա բանակցությունների ժամանակ: Դեռևս տեղեկություն չկա, որ տաճիկ կառավարական զորքերը Ախալքալաքից հեռացել են, վրաց կառավարությունն այնտեղ արդեն պաշտոնյաներ է նշանակում: Մի գյուղ՝ Քարինջ, վրաց զորքերով բռնված չի եղել, բայց և այնպես դա թերևս հնարավոր լինի հանձնել:

Եր. Հարությունյան - Կարելի կլինի այժմ գործնական քայլի դիմել և չի կարելի լիազորել կառավարության: Կոնֆերանսին պառլամենտական ներկայացուցչություն ուղարկելն ավելորդ է և աննպատակահարմար. լավ կլինի թողնել այդ կառավարության: Տնտեսական խնդիրները պիտի լուծի ոչ թե պառլամենտական ներկայացուցչությունը, այլ՝ Արտաքին գործոց մինիստրությունը:

Հայկ Ազատյան - Դեմարկացիոն գիծը նշանակություն չունի և առաջարկում ենք այդ հարցն առաջ չբերել և ավելորդ ծախսեր չանել: Այդ բանը գործն ավելի կբարդացնի և կխանգարի: Առաջարկում ենք թողնել դեմարկացիոն գծի հարցը և հրահանգել մեր զինվորական իշխանության կանգնել այն տեղում, որ տեղում այժմ գտնվում են և սկսել այդ հարաբերությունները: Առաջարկում ենք նաև մեր պառլամենտի կողմից վրաց պառլամենտին ուղարկել մի հեռագիր՝ հայտնելով, որ Հայաստանի Խորհուրդն ընդառաջ է գնում կոնֆերանսի գումարմանը և կուղարկի յուր ներկայացուցչությունը՝ բաղկացած բոլոր ֆրակցիաների ներկայացուցիչներից:

Ստ. Մամիկոնյան - Հարցնում է զինվորական մինիստրին, թե ի՞նչ դրության մեջ է սահմանը և արդյո՞ք դեմարկացիոն գծի կարիք կա՞:

Զինվորական մինիստր - Որովհետև կան տեղեր, որ սկզբում չեն բռնվել տաճիկ զորքերով, բայց դեռ վիճելի են, լավ են համարում ընդունել դեմարկացիոն գծի կարևորությունը:

Նախագահ - Քվեարկության է դրվում Հ[այ] Հեղ. Դաշնակցության ֆրակցիայի առաջարկությունը:

«Հայ-վրացական խնդիրը խաղաղ ճանապարհով լուծելու նպատակով, Հայաստանի Խորհուրդը հանձնարարում է կառավարությանը բանակցություններ սկսել վրաց կառավարության հետ՝ կոնֆերանս գումարելու՝ սահմանագիծն որոշելու համար»:

Եր. Հարությունյան - Առաջարկում եմ բանաձևին կցել հետևյալ հավելումը. «և երկու երկրների համար տնտեսական նշանակություն ունեցող մի շարք հարցեր քննելու համար»:

Քվեարկվում է հավելումը և չի անցնում՝ ստանալով թեր 1 ձայն:

Քվեարկվում է Հայ. Հեղ. Դաշնակցության ֆրակցիայի առաջարկությունը, որն անցնում է՝ ստանալով թեր 27 ձայն:

Հայկ Ազատյան - Սոցիալ-դեմոկրատական ֆրակցիայի կողմից առաջարկում եմ այս որոշման մասին մեր պառլամենտի նախագահությունը տեղեկացնի Վրաստանի պառլամենտի նախագահությանը:

Արշամ Խոնդկարյան - Պաշտոնական քաղաքականությունը տարվում է պաշտոնապես, ներկա դեպքում՝ արտաքին գործոց մինիստրությունը: Պառլամենտական շնորհավորանքներ և ողջույններ կարող է ուղարկել և ոչ թե արտաքին քաղաքականության վերաբերյալ գործեր վարի:

Հայկ Ազատյան - Մեր առաջարկն ագիտացիայի բնույթ ունի և մեծ նշանակություն կարող է ունենալ հետագա իրադարձությունների վրա:

Ստ. Մամիկոնյան - Եթե հեռագիրը կրելու է ողջույնի բնույթ, կարելի է:

Հայկ Ազատյան - Հայտնում է, որ առաջարկությունն այդ ուղղությամբ է:

Քվեարկվում է Սոցիալ - դեմոկրատական ֆրակցիայի առաջարկությունը և անցնում է՝ ստանալով թեր 19 ձայն:

Նախագահ - Քննության է դրվում օրակարգի երրորդ հարցը, այն է՝ «Միջնակարգ դպրոցների աշակերտներին զինվորական ծառայությունից ազատելու օրինագիծը» առաջին ընթերցանությամբ: Զեկուցանում է պատգամավոր Գր. Տեր - Խաչատրյանը:

Հակ. Տեր-Հակոբյան - Այդ օրինագիծը ոչ մի ֆրակցիա էլ չի եկել և քննության չի առնվել: Առաջարկում ենք հետաձգել:

Հայկ Ազատյան - Հարցը շատ փոքր է և կարող ենք 5 րոպեում վերջացնել: Առաջարկում եմ ուղղակի անցնել քննության:

Նախագահ - Քվեարկության եմ դնում Հ. Ազատյանի առաջարկությունը: (Քվեարկվում է): Ընդունվում է: Պատգամավոր Տեր-Խաչատրյան, զեկուցեցե՛ք օրինագծի մասին:

Գր. Տեր-Խաչատրյան - Զինվորական մինիստրությունից խորհրդի նախագահության միջոցով օրենսդրական հանձնաժողովն ստացել է «Միջնակարգ դպրոցների աշակերտներին զինվորական ծառայությունից ազատագրելու» օրինագիծը: Ի նկատի ունենալով այն հանգամանքը, որ հին օրենքներով միջնակարգ դպրոցների աշակերտներին ուսումն ավարտելու համար տրվում էր ժամանակ և այդ օրենքը խախտվել է անցյալ տարի Ազգային խորհրդի որոշումով՝ երկրի դրությունն ի նկատի ունենալով, իսկ այժմ երկրի դրությունը փոխված է միանգամայն և դպրոցներն էլ բացված արդեն, օրենսդրական հանձնաժողովը միաձայն ընդունեց այս օրինագիծը և հայտնում է նրա շտապողականությունը: Ահա այդ օրինագիծը.

Օրինագիծ
միջնակարգ դպրոցների աշակերտների զինվորական պարտադիր ծառայությունը հետաձգելու մասին

1. Հայոց Ազգային խորհրդի որոշումով զորքի շարքերը կանչված միջնակարգ դպրոցների աշակերտներին իրավունք է տրվում ժամանակավորապես ազատվելու զինվորական ծառայությունից՝ միջնակարգ կրթությունը վերջացնելու համար:

Այս արտոնությամբ օգտվում են 25 տարին չլրացած երիտասարդները: 25 տարին լրացրածները ենթարկվում են զինակոչի, թեկուզ վերջացրած չլինեն միջնակարգ կրթությունը:

2. Հետաձգման իրավունքն ստանալու համար պիտի ներկայացնել դպրոցի տեսչի կամ գլխավորի վկայականը առ այն, որ աշակերտն ընդհատել է իր ուսումը զորքի շարքերը մտնելու պատճառով և զինվորական ծառայությունից ազատվելուց հետո հետ կընդունվի դպրոց:

3. Վերոհիշյալ հիմունքներով ծառայությունից ազատվելու համար տրվում է առանձին զորամասերի հրամանատարից կարգադրություն՝ համապատասխան պետի առաջադրության հիման վրա:

4. Ազատվածները սահմանված կարգով հաշվի են առնվում զինվորական պետից և ուչյոտի հիմնարկությունից, ընդսմին նրանց զորքի շարքերում ծառայության ժամանակ հաշվի է առնվում նորից իսկական զինակոչին ենթարկվելու ժամանակ»:

Հով. Բուդաղյան - Հարցնում եմ, թե ինչո՞վ է տարբերվում ներկա օրենքը Ռուսաստանի օրենքից:

Զինվորական մինիստր - Ռուսական օրենքում ասված է, թե պատերազմի և թե խաղաղ ժամանակ միջնակարգ դպրոցների աշակերտները ազատվում են զինվորական ծառայությունից մինչև 24 տարին լրանալը: Բայց որովհետև Ազգային խորհուրդը բոլոր աշակերտներին զինվորական ծառայության է կոչել և ռուսական օրենքում չկա այնպիսի կետ, որում ասված լիներ, թե զինվորական ծառայության մեջ ընդհատում կարելի է անել, ուստի և դրա համար մինիստրությունն առաջարկում է այդ օրինագիծը:

Նախագահ - Օրինագծի ընդհանուր հիմունքների մասին առարկություններ չկա՞ն: (Առարկություններ չեն լինում): Քանի որ առարկություններ չկան և հայտնված է օրինագծի շտապողականություն, ուստի քվեարկության եմ դնում օրինագիծն ամբողջությամբ: (Քվեարկվում է): Ընդունվում է միաձայն և հանձնվում է խմբագրական հանձնաժողովին:

Քննության է դրվում օրակարգի չորրորդ հարցը, այն է՝ Ղարաքիլիսայի շրջանը պառլամենտական քննիչ հանձնաժողով ուղարկելու խնդիրը: Առաջարկում եմ խորհրդին արտահայտվելու այդ մասին:

Հայկ Ազատյան - (ըստ կարգի): Այս հարցն առաջարկում եմ քննության առնել Սոցիալիստ-հեղափոխականների ֆրակցիայի հարցապնդման քննությունից հետո, որովհետև հարցապնդման քննության ժամանակ կպարզվեն հարցեր, որոնց հիման վրա և խորհուրդը կարտահայտվի այդ խնդրի շուրջը:

Նախագահ (դիմելով կառավարության) - Կառավարությունն առարկություն չունի՞ այս առաջարկության դեմ:

Մինիստր նախագահ - Կառավարությունն ոչ մի առարկություն չունի այդ առաջարկության դեմ:

Նախագահ - Խոսքը պատկանում է պատգամավոր Դ. Զուբյանին:

Դ. Զուբյան - Առաջին անգամ չէ, որ ձախը հարցապնդում է մտցնում: Կառավարության պատասխանը մեր ֆրակցիայի հարցապնդման չի բավարարում թե՛ ձևի, թե՛ տոնի և թե՛ իմաստի կողմից: Այդ պատասխանը չպարզաբանեց խնդիրը և ցույց չտվեց ու չցրեց այն տարակուսանքները, որ գոյություն ունեին, այլ, ընդհակառակն, խորացրեց հարցապնդման մեջ հարուցած հարցերը:

Այդ բացատրությամբ մեր պառլամենտի գոյությունը չի վկայվում, այլ, ընդհակառակն, այդ ասում է, որ նրա համար գոյություն չունեն այդպիսի կարգեր և չի պաշտպանում պառլամենտի իրավունքները հանդեպ կառավարության: Օրինակներն այնքան են, որ կարիք չկա թվելու մի առ մի: Երեկ երեկոյան Դիլիջանի զեմստվոյական ընտրությունների հարցի քննությունն ու կառավարության in corpore տված պատասխանը ամենափայլուն օրինակն է դրա համար: Ներկա հարցապնդումից մեր ֆրակցիան նպատակ ուներ, որ կառավարությունը ցուցահաներ պառլամենտի առաջ այդ իշխանության իմաստն ու նրա ֆունկցիաները: Սակայն, չնայած մեջ ընդ մեջ կառավարության տրված հարցերին, այնուամենայնիվ, պառլամենտի անդամների համար չպարզվեց. թե ի՞նչ իշխանություն է այդ: Եթե կուզեք, նա գեներալ նահանգապետություն է, որպիսին ոչ մի կառավարության մեջ չկա: Կառավարությունն այդտեղ զինվորական դրություն է հայտարարել և թե՛ քաղաքացիական և թե՛ զինվորական իշխանությունները կենտրոնացրել մի անձի մեջ, նախ՝ իրավունք ունե՞ր կառավարությունը զինվորական դրություն մտցնելու այս կամ այն շրջանը առանց պառլամենտի և եթե թույլ էր տրվել նրան պառլամենտի կողմից այդ, որքա՞ն նպատակահարմար էր այդպիսի

իշխանություն մտցնելը այդ շրջանում և երկրի դրությունն այդ պահանջի կարիքն զգու՞մ է, թե ոչ:

Որտեղի՞ց է վերցրել մեր կառավարությունը այն օրենքը, որով մի որևէ շրջան զինվորական դրություն մտցնում է ոչ թե պառլամենտը, այլ կառավարությունը: Թողնում եմ Շվեյցարիան, որտեղ գոյություն էլ չունի զինվորական դրություն. վերցնում եմ Անգլիան և Հյուսիսային Ամերիկան: Անգլիայում զինվորական դրություն մտցնել որևէ շրջան առանց պառլամենտի գիտության ու նրա հավանության ունենալու, նշանակում է փոխել Kavcas Corpus-ը. այնտեղ ոչ մի կառավարություն իրավունք չունի զինվորական դրություն մտցնել որևէ շրջան առանց պառլամենտի հավանության: Ֆրանսիական հանրապետության որևէ շրջան զինվորական դրություն հայտարարել կարող է միմիայն պառլամենտը: Վերջինիս բացակայության ժամանակ միայն Սինիստր-նախագահը կարող է այդ հայտարարել, այն էլ պայմանով, որ երկու օրից հետո պառլամենտը ակցիա տա դրան: Մնում է ենթադրել, որ մեր կառավարությունն ուզել է օգտվել այն օրենքից, որ մոտ է Ռուսաստանին: Ճիշտ է, Ռուսաստանում այդ օրենքը կար, բայց պիտի ասեմ, որ այդ որոշումներն առաջ են եկել սև ժամանակներում և օգտվել այդ օրենքից մեր հանրապետության կառավարության համար ոչ միայն վայել չէ, այլև դեմ է հանրապետության էության: Բացի այդ, օգտվելով այդ օրենքից, նշանակում է կատարել օրենքի մի մասը: Օրենքների հիմնական մասը միանգամայն գրում է այդ: Հոդ. 16[-ում] ասվում է, որ զինվորական դրություն հայտարարում է կայսրը: Սակայն երբ ծագեց 1908թ. սև հոսանքը, զինվորական դրություն հայտարարելու իրավունքը տրվեց կառավարությանը: Հանրապետական մեր կառավարությունն եթե իրեն համար օրինակ է վերցնում Ռուսաստանը, նա պիտի օգտվի հիմնական օրենքից և ոչ թե սև հոսանքի ծագման շրջանից:

Բացի այս, զուտ օրինական կողմից, կա և մի ուրիշը. այդ նպատակահարմարության հարցն է: Ընդունում եմ, որ այդ շրջանը նոր է մեր ձեռքն ընկել, ուրեմն և շտապողական էր իշխանության խնդիրը, ուստի և հայտարարվել է այդ շրջանը զինվորական դրության մեջ և նշանակվել է զինվորական պետ: Որպեսզի այդ խնդիրը մեզ համար պարզ լինի, տեսնենք, թե ի՞նչ պայմաններում են զինվորական դրության մեջ հայտարարում որևէ շրջան որոշ երկրներում: Ռուսաստանում այդ հայտարարվում էր պատերազմի հայտարարման ժամանակ. մեզանում այդ չկա և պատճառաբանել, որ պատերազմական դրության մեջ ենք և զինվորական դրություն այդ շրջանում այդ նպատակով է հայտարարված՝ չենք կարող:

Թուրքերը թողնում են մեր տերիտորիայի իրենց կողմից գրավված մի մասը և այնտեղի ժողովուրդը, ազատվելով մի ստրկությունից, անմիջապես ընկնում է մի նոր ստրկության մեջ, որովհետև հայտարարել մի շրջան զինվորական դրության մեջ, դա նշանակում է, այդ շրջանում օրենքների և իրավունքների խախտում մըտցնել: Քաղաքացին այսպիսի դրության ժամանակ չգիտի ինչ պիտի անի, իսկ զինվորականները գիտեն միայն մի բան՝ որ ամեն բան թույլատրելի է իրենց և կարող են անել:

Եթե մեր կառավարությունը, ինչպես իր դեկլարացիայի մեջ ասված էր, ձգտում ունի երկրում տարրական իրավակարգ ստեղծելու, նա պիտի աներ այդ քայլը, որովհետև զինվորական դրությունը ժխտում [է] ամեն կարգի օրինականություն և առաջ է բերում մի մասի կամայականություն հանդեպ մյուսի, այս դեպքում՝ խաղաղ ազգաբնակության:

Այս բոլորն ի նկատի ունենալով, Սոցիալիստ-հեղափոխականների ֆրակցիան գտնում է, որ թե օրինականության և թե նպատակահարմարության համար կառավարությունն իրավունք չուներ Ղարաբաղի շրջանում զինվորական դրություն կատարել և այդպիսի իշխանությունն էլ այնպիսի ժողովրդի համար, որ արդեն տնտեսապես շատ քայքայված է, փրկարար նշանակություն չի ունենալու: Կառավարության պատասխանելու ժամանակ հարց տրվեց Սինիստր-նախագահին, թե կոմիսարները զինվորականնե՞ր են լինելու, թե՝ ոչ: Այս հարցին պատասխանեց ներքին գործոց մինիստրը, ասելով, որ կոմիսարները զինվորականներ կլինեն, իսկ նրանք կունենան քաղաքացիական օգնականներ: Որպեսզի

պարզ լինի, թե կառավարության այդ քայլը ինչ նպատակով է արված, կբերեմ հետևյալ փաստը: Պաշտոնական օրգան «Կառավարության լրաբերում» կարդում ենք, որ պոդպորուչիկ Տեր-Սարգսյանը նշանակված է Ղարաքիլիսայի կոմիսար: Այս պարոնը էջմիածնի զինվորական կոմենդանտն է, որի մասին խորհուրդը շատ է լսել և որի գործերը քննելու համար պառլամենտական քննիչ հանձնաժողով ուղարկվեց: Եվ այժմ նույն մարդը, որին հեռացրել էր պաշտոնից պառլամենտական քննիչ հանձնաժողովը, կառավարության կողմից նշանակվում է մի այլ շրջանի կոմիսար: Այս հիշեցնում է հին Ռուսական կառավարության, որը մեղադրվող պաշտոնյաներին պատժելու համար փոխում էր նրա տեղը և, եթե կուզեք, բարձրացնելով նաև նրա չինը:

Այս դրությունը մեր ֆրակցիան գտնում է անբավարար և առաջարկում է հետևյալ բանաձևը.

«Լսելով կառավարության նախագահի բացատրությունը Ղարաքիլիսայի, Լոռու և Դիլիջանի շրջանում զինվորական-վարչական կազմակերպություն մըտցնելու մասին՝ Հայաստանի Խորհուրդը գտնում է այն անբավարար և անցնում է հերթական հարցերին»:

Այնուհետև այդ նյութերի շուրջը բացվում են վիճաբանություններ, որոնց մասնակցում են պատգամավորներ *Արշ. Խոնդկարյան, Եր. Հարությունյան, Հ. Սարգսյան, Հայկ Ազատյան, Ստ. Մամիկոնյան և Մինիստր-նախագահ:* Պատգամավորներ Արշամ Խոնդկարյան, Եր. Հարությունյան, Հայկ Ազատյան և Ստ. Մամիկոնյան, իրենց ճառերով քննադատելով կառավարության, երևան են հանում նրա ձգտումները՝ գործելու առանց պառլամենտի և խախտելու վերջինիս իրավունքները: Պատգամավորները նույնպես բավարար չեն համարում կառավարության տված պատասխանը Սոցիալիստ-հեղափոխականների ֆրակցիայի առաջադրած հարցապնդմանը և պնդում են այն բանի վրա, որ այդ շրջաններում պիտի վերացնել կառավարության կողմից նշանակված զինվորական-վարչական իշխանությունը և նոր իշխանություն կազմելու համար կառավարությունը նոր իշխանություն այդ շրջանում մտցնելու վերաբերմամբ պարտավորվի օրինագիծ մտցնել Հայաստանի Խորհուրդ:

Պատգամավոր *Հայկ Սարգսյանը* գտնում է կառավարության պատասխանը բավարար և այդ շրջաններում զինվորա-վարչական իշխանություն մտցնելը կառավարության կողմից ոչ թե պառլամենտի իրավունքների խախտում և նրա ինքնագլուխ գործելու ցանկություն է, այլ այդ բխում է երկրի իրավական դրությունից և վերջինիս բարօրությունն աչքի առաջ ունենալով է միայն, որ այդ շրջաններում հաստատված է այդպիսի իշխանություն:

Նախագահ- Նախագահությունն առաջարկություն է ստացել դադարեցնել վիճաբանությունները և ես նակազի հիման վրա քվեարկության եմ դնում այդ առաջարկը:

Քվեարկվում է առաջարկը, որն անցնում է՝ ստանալով թեր 17 ձայն:

Նախագահ- Քվեարկության է դրվում Սոցիալիստ-հեղափոխականների ֆրակցիայի բանաձևը:

Քվեարկվում է և անցնում է՝ ստանալով թեր 15 ձայն և դեմ 14 ձայն:

Քվեարկվում է Սոցիալիստ-դեմոկրատական ֆրակցիայի լրացուցիչ առաջարկը՝

«Կառավարությանն հանձնարարվում է շուտափույթ օրինագիծ ներկայացնել այն մասին, թե ինչպես կազմակերպել այդ երեք շրջանների վարչական մարմինները»:

Արշամ Խոնդկարյան - Հայտնում է, որ իրենք դեմ չեն Սոցիալ-դեմոկրատիական ֆրակցիայի առաջարկին, միայն մի բացատրությամբ, որ կառավարությունն ասելով պիտի հասկանանք Հայաստանի Կառավարությունը և ոչ թե մի այլը:

Քվեարկվում է և չի անցնում Սոցիալ-դեմոկրատական ֆրակցիայի առաջարկությունն՝ ստանալով թեր 11 ձայն, դեմ 14 ձայն:

Նախագահ - Քվեարկության է դրվում պատգամավոր Եր. Հարությունյանի առաջարկությունը.

«Հայաստանի Խորհուրդը հանձնարարում է օրենսդրական հանձնաժողովին օրինագիծ ներկայացնել խորհրդին՝ Ղարաքիլիսայի շրջանում վարչություն կազմակերպելու մասին»:

Քվեարկվում է և չի անցնում՝ ստանալով 12 ձայն թեր և 15 ձ[այն] դեմ:

Օրակարգի 5-րդ հարցի քննությունը, այն է՝ Ղարաքիլիսայի շրջանը պառլամենտական քննիչ հանձնաժողով ուղարկելու խնդիրը, հետաձգվում է:

Նախագահ - Նիստը հայտարարում եմ փակված:

Նիստը փակվում է ցերեկվա ժամ. 4,15 րոպ.:

ՀԱԱ, ֆ. 198, ց. 1, գ. 15, թթ. 2-22: Բնագիր: Ձեռագիր:
Տե՛ս նաև՝ «Կառավարության լրաբեր», 8 նոյեմբերի 1918թ.: